



ՊԵՏՐՈՍ ՇՈՒՐՋԱՆ

Ի պատրիարքական ընտրություն Ամեն . Հայրիկին

Այն սգալի սև սև նոճաց ետևեն
Արշալույսին շողք մեզի «Լո՛յս» կավետեն,
Խուսեց խավարն, փողփողե լուս արևուն
Հայոց կարմիր մարզաց սառուտ սարերուն.
Փրլատակաց մըթին խորքեն կուգա ձայն
Հայե՛ր, Հայե՛ր, դեռ Հայաստան չ'է՛ կործան...

Զայն տըվողը չ'է՛ ըստվեր,
Հուր ներշնչողը չ'է՛ն աստղեր,
Եղբայրության է հուր, ձայն,
Հայը սիրող Հա՛յն է այն:

Նա գիշերվան հետ ազգ խոկաց ու լացավ,
Եվ արևուն սըլաքաց հետ կրակ դարձավ,
Հողմոց թևով միշտ սըլացավ Հայկարան,
Տիգրիսի հետ թըրջեց ավերք տիսրական.
Հայաստանի, Եղբայրության սիրահար
«Հա՛յ» գոչելով շուրթերն եղան դալկահար:

Ավարայրի նա վարդին
Սոխակն եղավ տրտմագին,
«Վարդա՛ն» գոչեց նա, անդեն
Վասա՛կն ելավ դամբանեն:

Նա իրավո՞ւնք, ազատությո՞ւն գոչեց հար,
Փոշոտ ու խոնջ ոտքերն նետեց ուր Հայ կար,
Ուր որ Հայ կար ջերմ համբուրեց նա այն հողն,
Ուր Հայն շնչեց՝ հառաչ և հուր դրկեց հոն.
Բոցաթրոիչ Հայեն ի Հայ նա թրոավ,
Հարված, ցավ, դավ՝ սերն խեղդելու շեղան բավ:

Այս հայկազնը չուներ սուր,
Այլ կուրծն ուներ Հայ, խաչ, հուր.
Կը հազներ սեր և գրգլյակ,
Նա զո՞ւթ ուներ, ո՞չ քըսակ:

Ազա՞տ սիրեց, ազա՞տ գոչեց, չը թռվեց.
Հայն զ'այն ատեց, Հայ մը ձեռքը չը թռթվեց.
Բանտ, կախաղան, արսոր, Սիպիր և սուսեր
Չը կրցին ձայնն մարել, խեղդել իր հույսեր.
Միշտ «Հայ» կանչեց, բարձն էր գլխուն Մասյաց սար.
Նա սիրտն ըրավ հայրենահուշ զոռ քընար.

Արդ հայրենյաց մեր շնչիկ՝
Շով մը կուգա անուշիկ՝
Վառ ճակատուց այցելու,
Հայուն աչերն սրբելու:

Բա՞ց են թևեր, բա՞ց են սրտեր, բա՞ց ճակատ,
Եկո՞ օգնել տըկար Հայուն ապաբախտ,
Հո՞ւր հայրենյաց, եղբայրության դու հազա՞զ,
Քընարահար Հայու մը իղձ քեզ իրեշտակ.
Վես Վոսփորին ալիք ռզքեզ բարևեն.
Ցըրվե՞ սև ձեռք՝ սև ամպ Հայոց արևեն.

Արտոսը ու քիրտդ թռդ փալփիխ՝

Չերք աստղեր Հայ երկնքին,

Եվ սրվեցուր Հայուն դու

Միրե՛լ, օգնե՛լ իրարու:

Արտասվաթոր՝ քե՛զ կը նային Հայ աչեր,

Սև շղթաներ քեզ ցույց կուտան զռո քաջեր,

Մըշտ կտրիմք՝ աղջիկք ի քեզ ապաստան

Հայն ու դամբանն, տաճարն, հյուղակն՝ Հայաստան:

Թո՞ղ փլատակաց մոխրեն հառնեն հիշատակք,

Մութ մենաստանք վերափայլե՛ն նախնի փառք...

Լո՛յս, լո՛յս տեղան ամեն տեղ,

Գիտությո՛ւն, լո՛յսն Հայ աստեղ,

Լո՛յս հյուղակին, լո՛յս վըհին,

Լո՛յս Հայ փառաց շեշ ջահին:

Ահա սրանա մեզ ապագա բոցագես,

Մեր հայրենի ավերակաց տալ լույս վես.

Հարկ չեն մեզի նիզակ և սուր ու վառող.

Իրավունքի, սիրո, լուսն ենք կարոտ.

Եղբայրությա՛ն Հայն կը հենու, ո՛չ քազի,

Բոնե ձեռքեն, որ շունչ առնե և հոգի.

Եվ ալ մոռնա հայկազն հեր

Հին հարվածներն ու խոր վերք.

Եվ սիրտք ի տրուպ որոտան

Կյա՛ց միշտ, ՀԱՅՐԻԿ ԽԸՐԻՄՅԱՆ»:

Սեպտեմբերի 27, 1869